ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

09 փետրվարի 2011թ. թիվ 6-Ա

ԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՎՃԱՐԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ, ՀԱՄԱԿԱՐԳԵԼՈՒ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 4-ի թիվ 318-Ն, 2010 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 1762-Ն որոշումները և ՀՀ Առողջապահության նախարարի 2011 թվականի հունվարի 31-ի թիվ 97-Ա հրամանը

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Մարզպետարանի ենթակայությամբ գործող հիվանդանոցային ծառայություններ իրականացնող բուժհաստատություններում համավճարի մեխանիզմների ներդրման աշխատանքները կազմակերպելու և գործընթացը շարունակական հսկողության տակ պահելու նպատակով նշանակել պատասխանատուներ.
   Սամվել Քամալյան - <Բերդի ԲԿ>, <Նոյեմբերյանի հիվանդանոց>, <Արծվաբերդի ԱԿ>, <Այգեձորի Ակ> ՓԲԸ-ների համար,
   Նարինե Ճաղարյան - <Իջևանի ԲԿ>, <Դիլիջանի ԲԿ>, <Աչաջրի ԱԿ> ՓԲԸ-ների համար:
2. Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության /0-263/3-22-45 հեռախոսահամարը առաջարկել որպես թեժ գծի հեռախոսահամար՝ համավճարների հետ կապված ազգաբնակչության կողմից առաջացած խնդիրները ներկայացնելու և օպերատիվ լուծում տալու նպատակով:
3. Յուրաքանչյուր ուրբաթ օր պատասխանատուներից ստացված համավճարների ներդրման աշխատանքների, ազգաբնակչության բողոքների և բարձրացված խնդիրների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ Տավուշի մարզպետին և ՀՀ ԱՆ կողմից ստեղծված մշտադիտարկման խմբի ղեկավարին:
4. Աշխատանքների կազմակերպման հսկողությունը դնել մարզպետի խորհրդական Կ. Դովլաթբեկյանի վրա:

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

2011թ. փետրվարի 9
Ք. Իջևան